

ուում է, որ այդպիսով ձեռք գաղափար կազմել
չէ կարելի: Աւելի ուշից կը լինէր ասել, մի
ժողովրդի քաղաքակրթութեան չափը որոշե-
լու համար իմացէ՞ք զրա ուսուցչի, գրողի եւ
դերասանի գրութիւնը: Այդ վերջին տեսակէ-
տից եթէ նայելու լինենք, մենք կը տեսնենք,
որ հայը միայն մի կերպ «եօլա» է տանում իր
գաղափարները, թատերական եւ գրական գոր-
ծերը: Կը տեսնէք, որ այդ ասպարէզներում
գործողների վրա նայում է իրենեւ տաճարա-
կեր չարարանքների մասնավոր պարիսերների
վրա: Կը տեսնէք, որ այդ ասպարէզներում
գործողները համար այնպիսի պայմաններ են
ստեղծված, որ ամենավերջին վաճառականը
կամ գործակալներն անգամ իրան աւելի ան-
կարելի եւ ասպարէզ է համարում: Հայ ուսուցչի-
չը, գրողը, դերասանը պէտք է մշակույթ մտա-
նախնայութեան մէջ լինեն իրանց վաղվայ գոյու-
թեան մասին: Նրանք ամբողջովին կախված են
ինքնահաւան եւ անասարգ բարեկեցիկների
բարեկեցիկներից: Ոչ մի որոշ բան նրանց
յայտնի չէ. նրանց գլխին Դաւիթեան օրի պէս
ամեն ինչ կախված են իրանցից «անկախ
պատճառներով»: Նրանք պատահականութեան
գերիներն են:

Այսօր, դիտելով Կիրակոս-Մարկոսները այն-
քան առատաձեւ են դառել, որ ուզում են մի
քիչ էլ «ազգասիրութիւն» անել եւ ասա պահ-
վում է «թատերական խումբ», ուր այդ Կի-
րակոս-Մարկոսները հրամայողների դեր են
կատարում, իսկ դերասանները—հանդիման-
ների կամ ստորակներ: Իսկ եթէ վաղը մեր
Կիրակոս-Մարկոսները կը դերասաններ ընտել-
ներ, կոլոսականներ եւ բակարայի վրա միա-
խել իրանց աւելորդ գումարները—դերասանը
պէտք է մնայ փողոցում, դիմէ արան-նրան:
Սկզբում է սակարկութիւն. Կիրակոսները գան-
գաւադում են «կրիզիսի», ասում են որ չեն կա-
րող «գէշֆիդի» դիմանալ եւ վերջապէս առա-
ջարկում են, որ «գերաբերութիւն» անէ ինքը
դերասանը հայրենի բեմը պահպանելու համար:
Այդպէս է թատերական Տեսնենք եւ գրողը:
Այսօր գրողները այն ինչ ասպարէզ են նա-
խադասում են այն ինչ աղան է հոգաբարձու:
Հայ վարժապետը, եթէ գրանց չը հանդիմանա,
պէտք է հետանայ Կամ, եթէ «ինչ-ինչ պատ-
ճառներով» բերդէն չէ ծածկում ծախքերը,
մեր առջնորդը եւ հոգաբարձուները չեն ու-
զում եւսնել եւ աշխատանք ընդհատել եկա-
մունքներն ունեւորելու համար, այլ դիմում են
մի հեշտ միջոցի—կրճատել ուսուցչիներին չնչին
ոռնիկները: Գերաբերութիւնը պէտք է անէ
կրկին այդ խեղճ մշակը:

Բաժնութեան 88% միայն սիմիդըր է ցանկում:
Միւս աղբիւսակը ցոյց է տալիս, թէ այդ հա-
ցարդար ինչ չափով է տարածված նահանգի
խրաքանչիւր գաւառում. երրորդ աղբիւսակից
երեւում է, թէ տարեկան միջին թվով որքան
օրմիդը է արտադրվում Ռուսաստանից դե-
պի արտասահման, միայն Քուսթայի նահան-
գից որքան է արտահանվում եւ այլն:

Կարծում ենք հասկանալի է, որ այցելուներ-
ը ցուցահանդէսից կրկնակի օգուտ ստացած
կը լինէին, եթէ բոլոր բաժնիներում, բոլոր
էջքայիններին մտ էլ լինէին համապատաս-
խան թւեր ու տեղեկութիւններ:

XIV

Երկրագործական բաժնից ուղղակի անց-
նում ենք երկրագործական մեքենաների բա-
ժնի, որովհետեւ այդ երկուսը անմիջական
կապ ու առնչութիւն ունեն իրար հետ: Սա-
կայն այստեղ ամենից առաջ պէ՛ք է ընկնում
մի տարօրինակ երեւոյթ—չը կան տեղական
գործիչներ, չը կան մեր անպաճոյճ արօրն ու
գուլանը, փողին ու տափանը, գերանդին ու
մանդաղը: Ամբողջ բաժինը գաղափարված է
միայն արտասահմանում ու ուսական ֆիր-
մաների արտադրած մեքենաներով:

Կարծում ենք աւելի նպատակայարմար էր
կատարելագործված մեքենաների հանդէպ դնել
եւ մեր նահապետական գործիչները, որպէս
զի ստացվէր մի ընդհանր պատկեր, մի կոն-
տրաստ եւ որպէս զի այցելուներ կարողանար
մի համեմատական գիծ անցկացնել այդ եր-
կուսի մէջ:

Ծույլագրած առարկաների մէջ զլխաւոր տեղ
բռնել են «Осборнъ и К°», «Mac-Cormick»-ի,
«Инженеръ Пассекъ»-ի ֆիրմաները եւ այլն:
Ինչպէս յայտնի է, ամբողջ Կովկասում հող
մշակելու ամենատարածված գործիչներն են
գուլանը, արօրը, փողին ու տափանը:

Գուլանը բաղկացած է երկաթէ արածայր
ձեւիցի, խոփից, երկու անիւներից եւ փայտէ
լծակից: Նրան քաշելու համար լծում են սո-

Քառասուն տարի դոյութիւն ունի մամուլը:
Նրա մէջ գործողները կամ պէտք է, ի միջի
այոց, իրենեւ պարագայ վախճի խաղաղքը, զը-
րեն, իսկ իրանց ամբողջ մտածողութիւնը, ե-
ռանքը եւ ժամանակը նուիրեն այլ գործու-
նէութեան: Կարծում ենք ճարեւել խնդրին, կամ
թէ—պէտք է դարձնել «գերաբերութիւն» ա-
նեն: Դուրս է գալիս, որ իր ժողովրդի մտա-
ւոր առաջնորդութեան համար գործող ինտե-
լիգենտը արժանի չէ վայելելու նոյն իսկ այն-
պիսի մի համեմատ կենսը, որը մի որ եւ է ին-
տենսիվ կամ փաստաբանի համար «միջէր» է
թւում:

Ահա իրականութիւնը: Եւ մի հատարակու-
թիւն, որը իրան ներգութիւն չէ տալիս հարց
գնել, թէ ինչն են ողորմելի կեանք քաշում
մեր ազգային-հասարակական ձեռնարկութիւն-
ները, որը չէ աշխատում վերացնել կամայա-
կանութիւնը, պատահականութիւնը եւ նիւ-
թական կազմութեան անապահովութիւնը յի-
շած ասպարէզներում գործող մշակների հա-
մար—այդպիսի հասարակութիւնը երբեք չի
դուրս գալ «մի կերպ եօլա տանելու» այն ա-
նիծեալ սովորութիւնից, որը թշուառ պա-
րենք է դարձնում հայ վարժապետին, գրո-
ղին եւ դերասանին:

Լեւոն Սարգսեան

ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԾԻՆ ՀՈՂԵՐԻ ԱՐԴԻՒՆԱ-
ԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԶԵԻՆ

II

Եւ մտանայոց արի միմիայն այն բազմա-
թիւ դժուար ու ծանր պայմաններից մէկի
վրա, որին ենթակա է ներկայումս նախար-
դիւնաբերական գործը եւ որի վրա հարկաւոր
է լուրջ ուշադրութիւն դարձնել, որովհետեւ
նրա շնորհիւ շատ անգամ գործը դժուար է
լինում նահանգաւոր ենթարկել: Բայց այդ
հանգամանքից, պէտք է նկատել եւ այն, որ
տոնասարակ նախարդիւնաբերական գործի
վերադիր ծախսերի մասին շատ անհետեւ կար-
ծիքներ են տիրում:

Ասում են, թէ վերադիր ծախսերի չափը իւ-
րաքանչիւր արդիւնաբերած պուշ նախի հա-
մար համեմատ է 3,5—4 կոպէկի: Մեզ թւում է,
որ այդպէս հեղինակաւոր կերպով պնդել չէ
կարելի, որովհետեւ վերադիր ծախսերը պայ-
մանական մեծութիւն են, որի չափը կախված
է արդիւնաբերված քանակութիւնից: Այդպէս,
մէկը ծախսած ունի 300 հազար ռուբլի, իսկ
արդիւնաբերած է միմիայն մի հարիւր հա-
զար պուշ նախի կամ թէ ոչինչ, իսկ միւսը
ծախսած ունի 200 հազար ռուբլի եւ ունի

վորարար 7—12 զոյգ եղջեր ու գոմէշներ:
Գուլանը վարում է օրական մօտաւորապէս
1/2 դեռնաւային: Նրա անիւների լայնութիւնը
լինում է 10—12 վերջուկ, իսկ խորութիւնը
5—8 վերջուկ:

Արօր (զուլթը) աւելի պարզ ու թեթեւ է,
այդ պատճառով էլ չափազանց տարածված է
ամբողջ Կովկասում: Նա մեր երկրի գանազան
մասերում գանազան ձեւ ունի. օրինակ Շի-
րակի արօրը տարբերվում է Քուսթայի նա-
հանգում գործածվող արօրից: Նա կարող է
վարել օրական միջին թվով 1/4—1/2 դեռնա-
ւային Քաշելու համար պէտք է լծել 1—2 զոյգ
եղջեր:

Փողինը բաղկացած է 3—3 1/2 արջին եր-
կարութիւն ունեցող բարակ փայտից, որի վրա
ամրացրած են լինում 4—5 վերջուկ երկարու-
թեան փայտէ առամիներ: Բայց կան եւ ուրիշ
ձեւի (քառանկիւնի, եռանկիւնի) փողինը: Փո-
ղին գործածում են գուլանած հողը փափ-
կացնելու, կոշտելու փշիւրու համար:

Տափանը պատրաստում են ծառի ցախե-
րից: Նա ունենում է մօտ 3 արջին երկարու-
թիւն եւ 3/4—1 արջին լայնութիւն: Տափանը
գործածում են արդէն վարած եւ սերմանած
արտը հարթելու համար:

Բայց վերոյիշեալ գործիչներից շատ տեղե-
րում գործ են անվում նաեւ երկաթէ բահեր,
քլունկներ, փողինը, մարկելը, բրիչ, փայտէ
թիակներ եւ այլն: Դրանցով մշակում են գլխա-
ւորապէս բանջարանոցները եւ գուլանին ու
արտին անմատչելի հողերը:

Հնձելու համար գործ են անվում գերանդին
ու մանգաղը, իսկ կայելու—հորաքայները ձե-
ծելու համար կամը, որ ներկայումս չէ մի
հաստ ու լայն տախտակ, ներքեւից արածայր
քարերով ծածկված: Երեւանեան նահանգում
գործածական է նաեւ «ջարջար» գործիքը, որ
քառանկիւնի ձեւ եւ 2 արջին երկարութիւն
ունի: Ռուս գիւղացիները հաջորդաբար ձեծում
են երկաթէ չղթանքով ու գլուգլաններով:

միջին պուշից աւելի նախ: Այստեղ միջին
հաշիւ վերցնելու մենք իրաւունք չունենք, ո-
րովհետեւ ծախսը գանազան մարդկանց գրա-
նից է եղած: Ուրեմն, որովհետեւ կարելի է ա-
սել, թէ այդքան վերադիր ծախս պիտի ունե-
նամ:

Զէ կարելի նոյնպէս պնդել, թէ այս ինչ կը-
տոր նախարդին հողը արդիւնագործելու հա-
մար այսքան պէտք է ծախսել: Այդ շատ զը-
ւար է, մանաւանդ եթէ հողը նոր է, որով-
հետեւ իւրաքանչիւր կտոր հողի արդիւնագոր-
ծութիւնը կապված է յատուկ ծախսերի հետ,
որոնց չափը կախված է գործի գլուխ կանգ-
նած մարդու ձեռնհաս լինելուց եւ հողի ներ-
քին կազմից—այսինքն որ աստիճանի հարուստ
են նախի շերտերը եւ ինչպէս են ջրերի հո-
սանքը ու քանակութիւնը: Մենք ուզում ենք
ասել, որ նախարդիւնաբերական գործը ոչ մի
նահանգաւոր ենթարկել չէ կարելի, գործը ին-
քը կը թելադրէ ծախսերի չափը: Ուրեմն ա-
սել թէ այդքան կը ծախսել եւ այդքան կար-
գիւնաբերել, աւելի քան անհետեւութիւն է:
Մեզ թւում է, որ մասամբ այդ հաշիւների
շնորհիւ մի քանի խելացիները վերջին ա-
ծուրդի ժամանակ առաջարկեցին այն մեծ
գները եւ այսօր թռթռում են, որպէս ձուկը
առուցի վրա:

Այնպէս բազմաթիւ դժան օրինակները
մեզ ստիպում են լուրջ նայել գործի վրա եւ
զգոյշ լինել: Մեզ թւում է, որ այդ դժու-
րագործ մարդկանց ուղիք բերած կը լինի:

Ով ծանօթ է գործին եւ իր կաշի վրա փոր-
ձել է նախարդին հողերի արդիւնագործութեան
բազմաթիւ տարածութիւնները ներկայ պայ-
մաններում—մենք հաւատացած ենք—երբեք չի
համաձայնվի 40%—ով արդիւնագործել պետա-
կան նախարդին հողերը:

Այդ 40% ի հարկէ, իր հիմքը ունի: Բիբի-
էյրաթում, ինչպէս յայտնի է, կան հողեր, ո-
րոնց համար առաջարկված են պուշավար
7—12 1/2 կոպ: Շատ պարզ է, որ նախի դի-
մը 6 կոպ. եղած է ծախսակը այդ պուշա-
վարը անհետին է տալ: Այդպիսի գներ ա-
ռաջարկողները ինչիցիցով դիմեցին միմիա-
տրութեան, որ պուշավարը վերածվի բաժ-
նի, հաշիւով իւրաքանչիւր առաջարկած մի
կոպէկ պուշավարի փոխարէն յատկացնել
աճիւրդանք 50% ստացած նախի: Այդ հաշիւով
ով առաջարկել էր 7 կոպ., նա տրուեցին
կը յատկացնէ 35% ստացված նախի, 10
կոպ. առաջարկողը 50%, 12 կոպ. առաջար-
կողը 60% եւ այլն: Քեղցրվողը յարդից է
բռնում, ասում է ժողովրդական առածը:

Այժմ դառնանք նոյն նպատակին ծառայող
կատարելագործված մեքենաներին, որոնցից մի
քանի նմուշներ են դրված ներկայ ցուցահա-
նդէսում: Դրանց մէջ թէ բազմաառաջնութեամբ
եւ մեծ առաւելութիւններով առաջին տեղին են
բռնում հնձելու եւ կայելու մեքենաները...

Հողը մշակելու մեքենաներից ամենալայնատի-
ն է «երկաթէ գուլանը», որը կամաց-կամաց
մուտք է գործում եւ մեր գիւղացիների մէջ,
բայց այնքան էլ մեծ առաւելութիւններ չունի:
Միւսներից յիշատակութեան արժանի են ուղ-
ղածիք, եռանկիւնի, քառանկիւնի մանկեղները,
գլանաձեւ տափանը եւ մանաւանդ «սերմ-
նացան» մեքենան: Այդ մեքենան բաղկացած
է երկու անիւների վրա ամրացրած դատարկ
գլանակից. սերմը լցվում է այդ գլանի մէջ եւ
զուրս է թափվում դրա տակից ամրացրած
արածայր խորովակներից: «Սերմնացանը» քա-
շելու համար բաւական է մէկ ձիւ: Այդ մեքե-
նայի գինն է 60—200 ռուբլի: Կան եւ այն-
պիսի մեքենաներ, որոնք միաժամանակ եւ
սերմանում են եւ տափանում:

Հնձող մեքենան շատ գործածական է
քաղաքակրթ երկրներում եւ օրինակելի կալ-
ածնում: Նրան շարժելու համար բաւա-
կան է 2 ձի լծել: Շարժված ժամանակ նա
հեղեղեալ կտրատում է հասկերը եւ տարա-
ծում գետնի վրա: Վերջին ժամանակներս այն-
պիսի յարմարութիւն է ստեղծած, որ այդ մե-
քենան միաժամանակ եւ հնձում է եւ խորձ-
կացում: Նրա օգտակարութիւնն անմիջելի է,
որովհետեւ գործում է շատ արագ եւ պահան-
ջում է քիչ ծախս: Դժբաղդաբար նա ամենաքիչ
յարմար չէ կարող լինել, քանի որ բաւական
կարող է միայն տափարակ տեղերում:

Կան այդ մեքենայի մի քանի տեսակները:
Ներկայ ցուցահանդէսում նմուշներ են դրել
«Осборнъ и К°», «Mac-Cormick» ֆիրմաները
եւ այլն: Դրանց ներկայացուցիչները երբեմն—
երբեմն շարժել են տալիս այդ մեքենաները,

Համարեա այդ գրութեան մէջ են գտնվում
վերջին աճուրդին պետական նախարդին հողեր
վերցնողները: Այդ խնդրերով նրանք մտածում
էին միմիայն իրանց մեծաների չափը պակասեց-
նել եւ ոչ թէ այն պատճառով, որ այդպէս
ձեռնառու է արդիւնագործելու երկու չարիքից
նրանք փոքրագոյն են ընտրել, սակայն չա-
ղողվեց, մերժումն ստացան:

Մեզ թւում է, որ այդ խնդրերը ծառայել է
որպէս հիմք 40% նշանակելու համար: Այս-
պէս թէ այնպէս, վաճառականական տեսակէ-
տից 40% մենք գտնում ենք շատ մեծ վճար:
Ամենաբարձր վճարը, որ ներկայումս կարելի է
նշանակել, 25—30% է, որպէս զի արդիւնա-
գործն էլ մի բան կարողանայ վաճառակել իր
բազմապարկար աշխատանքի փոխարէն եւ մի-
ջոց ունենայ լիութիւն տալու: Այն բազմաթիւ
պահանջներին, որ առաջարկվում են նրան
մեր փոքր եղբայրների կեանքի բարեկեցու-
թեան վերաբերեալ:

Տ. Մարգարեան

ՆԱԽԱԿ ԲԱԼԱՍԽԱՆԻՑ

Սեպտեմբերի 12-ին

Բագուում կրկնուր շարունակվում է. նրա
օրաստիք այնպէս է աղքել հանձնադրերի
վրա, որ նրանք կարծես հաւատարմ են, թէ այլ
եւս չեն վերադառնալու: Այն ժամանակները,
երբ նրանց դրամագլուխը նախարդին գործում
տալիս էր առատապիտակ տոկոսներ, «Կորան»,
անհետացան այն ժամանակները, առեւտրի ե-
ղանակը փոխվեց, մենք էլ պիտի յարմարվեք
ժամանակի հետ, ասում է թ. Նախարդիւնա-
բերող ընկերութեան գործերի կառավարիչը իր
նամակում, որ ուղղած է նոյն ընկերութեան
հանքերի կառավարչին: Պէտք է փնտռել մի-
ջոցներ, հարաւորութեան չափ վերացնել ա-
ւելորդ ծախսերը, ձեւ հեղեղութեամբ:

Թէ ուրիշ էլ ինչ աւելորդ ծախսեր կան, դա
կառավարիչների գիտենալու գործն է, միայն
հաստատ աղբիւրներից գիտենք, որ ընդգծված
են հետեւեալ խօսքերը.—պէտք է պակասեց-
նել ծառայողների ոռնիկները գոնէ 20%: Ահա
մի նմուշ արդի տրամադրութեան. յիշել թէ
Մ. ընկերութիւնը կրճատել է ծառայողների
թիւը, Ա. —ն է թ. շարունակում են կրճատել,
այդ կը լինէր կրկնութիւն մի եւ նոյնի. շատ
քիչ բացառութեամբ ֆիրմաները արդէն հոտն
առել են, թէ անցեալ 100 եւ աւելի % փո-
խարէն յանկարծ 20 կամ 25 տոկոս է լինե-
լու արդիւնք եւ նախօրօք ձեռք են առնում

որպէս զի այցելող հասարակութիւնն աւելի
կօնկրէտ գաղափար կազմէ նրանց էութեան
մասին:

Կայելու համար էլ գոյութիւն ունեն կա-
տարելագործված մեքենաներ, որոնցով կարելի
է թէ ծախքը զգալի չափով պակասեցնել եւ
թէ մեծ ժամանակ չահել Կասիչ կամ կամ-
նիչ մեքենան բաւական բարդ կազմ ունի
եւ շարժվում է շոգեշարժ մեքենայի միջոցով:
Այդ մեքենայի գործողութիւնը հետեւեալն է.
հաջորդաբար խորձերը միմեանց յետեւից լցնում
են նրա արկղի մէջ. մեքենան շարժվում է եւ
մի քանի րօպէտում ամբողջ խորձը բաժանում
է երեք բաղադրիչ մասերի՝ հուշը, մաքուր
հաջահատիկներ եւ յարդ. դրանցից իւրաքան-
չիւրը թափվում է մի առանձին ծակից: Կասիչ
մեքենան էլ բաւական թանկ է (2000—4000
րուբլի), բայց կան եւ նրա հասարակ ու էժան
տեսակները:

Երկրագործական միւս մեքենաներից ուշա-
գրութեան արժանի են ցորեն մաղող մեքենան,
որ բաւական տարածված է նաեւ Կովկասում
եւ սիմիդըր մաքրող կամ ուրիշ խօսքով ասած
հաստագործ մեքենան:

Յայտնի փաստ է, որ Կովկասի երկրագործ
ժողովուրդը ներկայումս նեղ գիծակի մէջ է
գտնվում: Պատճառը մասամբ հողի պակասու-
թիւնն ու հարկերի ծանրութիւնն է, մասամբ
էլ անտառների նոր բերելութիւնը—(գործարա-
նական կեանքի գարգաւալը, բանւորների
բազմապարկ եւ այլն). բայց ամենազգաւորը
գիտութեան ու քաղաքակրթութեան բացա-
կարութիւնն է: Նա դեռ չարունակում է իր
պապնական արօր ու գուլանը գործ անել
նահապետական ձեւով հողը մշակել եւ նրա
պապները արդիւնագործել... Հարկաւոր է օր
առաջ նրան օգնութեան հասնել, գիտութիւն
տարածել, կատարելագործված մեքենաներ
մտցնել եւ հող մշակելու նոր ձեւեր սովորեց-
նել...

Ե. Թ.

